

6103

Wēnun

891.99

U-65

Emph

1888

11-2
11-5

Ph.

W 421.

ՊԱՆԴՈՒԽՏԻ ՅԻՂԱՏԱԿԱՐԱՆԻՑ

Ե Շ Ո Տ:

2011



2003

ՇՈՒՇԻ:

Մերզաբան Մահաբեի-Յակոբեանցի Տպարանում:

891.99
4-65

1889 թ.

21

ՍԿԻ.

891.99
4-65

Մնացական Յովհաննիսյան
ԽՈՒՆՈՒՆԾ
Мнѣшканъ Ивановичъ

պր.

ХУНУНЦЪ
ШУША.

Տ. ԲՅՈՒՆԸ
ԲԵ - 2

ՊԱՆՏՈՒԽԻ

ՅԻՂԱՏԱԿԱՐԱՆԻՑ

1006
29261

Հոգևոր Գործարար Գործարար
1888 թ. ԵՂՈՏ



ՇՈՒՇԻ:

Մերզախան Մաշտեխ-Յակոբեանցի Տպարանում:

1888 թ.

1762

ՎՐԱՍՏԱՅԻՆ

ՅԻՆՄԱՐԱՆՆԵՐ

Дозволено Цензурою Тифлисъ, 12
Октября 1888 года.

45403

Ստամբուլի Մ. Մուղդուսիականցի Պրեսիայի

Скоропеч. книгоп. раваца М. Мулдусіакопова Шушѣ

— 3 —

— Ինչո՞ք աստիճանի վրայ կանգնելու զգուշացումը
չէ՞րա՞նք միայն ինչպե՞ս զգուշացումը — ց
Ստամբուլի Մ. Մուղդուսիականցի Պրեսիայի

ՊԱՆՌՈՒԻՏԻ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ:

Ինչո՞ք աստիճանի վրայ կանգնելու զգուշացումը
չէ՞րա՞նք միայն ինչպե՞ս զգուշացումը — ց
Ստամբուլի Մ. Մուղդուսիականցի Պրեսիայի

Ստամբուլի Մ. Մուղդուսիականցի Պրեսիայի
1888 թ. օգոստոսի 12-րդ օրը

Կովկասի դաւառական քաղաքներից
մեկի եկեղեցու ծառագարդ փոքրիկ բա-
կի շուրջը բռնած էին երկսեռ երեխաների
և մարդկանց բազմութիւնը: Երկու փոք-
րիկ կանաչ ուռենիների տակ խաչ ու աւե-
տարանաւ կանգնած շուրջառագարդ քա-
հանաներն օրհնում էին մատաղի աղն.
Իսկ նոցա առաջ մօտ 25—30 ոչխարներ
անմոռնչ գլուխները դէպի կանաչ գե-
տինը ծռած կարծես մի որ և իցէ բընազդ-
մամբ տխուր սպասում էին անգուլթ
գահճի շողշողուն գանակին:

Աղօրհնէքն — այս գրեթէ մեղադր-
րական դատավճռի կէս մասը վերջացաւ:
Տախտակների վրայ փռեցին աղն, ոչխալ-

ները լիզում էին, սկսուեց մատաղօրհնէ-
քը—դատակնիքը բոլորովին վերջացաւ:
Անմեղները պիտի զոհուին մեղաւորների
մեղքերը քաւելու, արդարների արիւնով
մեղաւորները պիտի սրբուին, պիտի մաք-
րուին . . . :

188* Ապրիլ ամիսն էր, Չատկական
ճրագալոյց երեկոյ, արևելեան քրիստոնէ-
ից ուրախութեան տօն: Ն. քաղաքի առա-
ջին մասի ամբողջ տների մէջ լսվում էր
«Քրիստոս յարեաւ ի մեռելոց» խորհրդաւոր
սրբազան խօսքը, իւրաքանչիւր ընտանի-
քի հայրը կամ մեծը բռնած իւրայիննե-
րով հարուստ կամ աղքատիկ սեղանի
շուրջը կ'ուրախանային: Միայն ես պան-
տուխդրս էի տխուր իմ խոնաւ, մութ
սենեկիս մէջ, որ թշուառ հայրենիքումս
ամենայն ինչ ակամայից բռնակալութեան
զոհելուց լետոյ, կարողացայ միայն կեան-
քըս ազատելով ապրել անյայտութեան
մէջ:

Բնութիւնն էլ այս ուրախութեանը

մասնակցիլ կուզէր, օդը բաւականին ջինջ
ու մաքուր էր, չէր երևում մի պատառ
անգամ ամպ, անհամար աստղերը պըլպը-
լում էին անսահման կապուտ երկնքում,
գարնանային զովիկ ու հանդարտ քամին
փչելով սփռում էր ծառերի նորբայց ծա-
ղիկների անուշահոտութիւնը: Լուսնեա-
կը՝—գիշերուայ թագուհին ծածկուել էր,
կարծես նա չբաւականանալով մինչև օրս
թափուած բանական և անբան անմեղ
զոհների արիւնով, միայն այն ժամանակն
էր ուզում իւր դէմքը ցոյց տալ, երբ
զոհների տաք արիւնը դուրս կ'ցայտկէր
դահճի սառն դանակի հարուածից:

Սկզբեցու սպանդանոցանման բակում
լսվում էր խառն ձայներ, մի կողմից մա-
տաղ հաւաքողները զգուշացնում էին
ժամահարներին—եթէ մերոնք չեն, դրո-
ները չ'բանաք», միւս կողմից շարքով մի
քանի ահագին կաթսաների տակ վառու-
ած կրակի ճարճատմունքը, մի այլ կող-
մից Եւթոյ կապելու համար կանչուած-

ների շրջանն և միւս կողմից Հան-
դարտ Հոսանքով մի քանի քայլ Հեռա-
ւորութեամբ փոքրիկ լճակի մէջ թա-
փուող տաք արեան առուակի ձայնի Հետ
և մի ինչ և իցէ անորոշ խռպումն—
անէծք, տրտունջ, թէ բողոք:

— Գուցէ և երեքն էլ: Թշուառ զոհեր: Կեանքը քաղցր է,
թանգ և հարկաւոր, ուզում էք սպրեւլ,
Գուք ևս ինչպէս տեսնում էիք ինչպէս
ձեզ, ձեր ընկերներին, ազգակիցներին և
եղբայրներին անգթաբար զոհում էին և
այդ համարվում էր սրբազնագործութիւն:
Գուք ՚ի հարկէ անմեղ էիք, բայց ան-
պաշտպան և անոյժ. ուրեմն և ոչինչ
չէիք անում, եթէ ոչ՝ միայն անէծք՝
դէպի զազանացեալ անսիրտ մարդիկ,
տրտունջ՝ դէպի բնութիւնն, որ ձեզ չէ
տուել ոյժ և զէնք ձեր անձը թշնամու
դէմ պաշտպանելու:

Ծիտն անգամ կտցահարում է իւր

հակառակորդին, իսկ դուք ձեր պինդ գըլ-
խով, սուր եղջիւրներով որ միմեանց դէմ
մեծ յաղթութիւններ անելով երբեմն էլ
մահ էք սպառնում, թշնամու դէմ ոչինչ
չէք անում: Ի՞ զուր է ձեր տրտունջը:
Սէն՝ որից վախենում է մարդն և առանց
զէնքի չէ կարողանում մօտենալ նրան,
երկիւղ է կրում ձեզանից, դուք անզէն,
աներկիւղ սպանում էք նրան: Ձեր վայ-
րնի եղբայրներն, ազգակիցները հազա-
րաւոր անգամ երջանիկ են ձեզանից, նը-
րանք տպրում են առանց խնամակալի և
գազանների դէմ պաշտպանվում են, կրո-
վում են արիասրտութեամբ և Հնարագի-
տութեամբ:

Բութիւնը ձեզ միակերպ է վար-
ձատրել. իսկ դուք ձեր տգիտութիւնից
կամ հաշամանքների պակասութիւնից
փոխանակ եզ պաշտպանելու, այդ անձ-
նապաշտակե, սրբազան իրաւունքները
պահպանելու անհոգաբար թողել էք ու-
րիշներին, որք ՚ի հարկէ խնամում են

ձեզ՝ ոչ թէ միայն ձեր ստացուածքը կողոպտելու. այլ և ձեր կեանքն իրանց կեանքի տեղ զոհելու:

Մահը մահ է, իսկ այն մահն անմահութիւն, սուրբ և լիշատակաց արժանի է, երբ անձնապաշտութեան համար է և այն՝ ազատութեան մէջ: Բայց եթէ կասէք որ— նախախնամութիւնը ստեղծել է մեզ մարդկութեանը ցմահ հնազանդվելու համար, որքան առաւել ուրեմն է նա— մարդկութիւնն, որ բարձր է ըստ ամենայնի քան բոլոր մահկանացուները, պիտի հնազանդ և յօժարակամ հպատակութիւն ունենայ առ Աստուած և դէպի նրան սուրբ, արդար օրէնքներն, որոց հակառակ գործել է, գործում է և պիտի գործէ: Ի վերջոյ և բողոք դէպի բոլորի կառավարողը:

Ի ուրբ, ո՞վ անմեղ զօհեր, անյայտանում էք յաւիտենական մոռացութեան մէջ. դուք կորչում էք, ոչնչանում էք. իսկ ձեր բողոքն արդար է, անմահ է,

նա չէ մեռնում, նա կայ և կմնայ՝ որքան աշխարհն իւր ներկայ բնաւորութեամբ կայ:

Գիշերուայ կէս մասն անցել էր, մի քանի մարդիկ ոչխարները մաշկում էին, ոմանք մաշկածները յօշոտում. իսկ մէկն եռացող ահագին կաթսաների մօտ կանգնած իւր օդնականի հետ կտրտուած մրսերը եփում էր: Կաթսաներից դէպի վեր գոլորշիացած ճենճերահոտութիւնը կարծես բարձրանում էր դէպի Բարձրելոյն աթոռը, չ՛գիտեմ նրան իւր բողոքը մատուցանելու, թէ մարդկութեանը հետ հաշտեցնելու:

— Հաւանական է առաջինը, քան երկրորդը:

Իրսումն ամենայն ինչ վերջացած էր: Մօտ 12. հոգի շարքով եկեղեցու մեծ սենեկում նստած Քիչայ էին կապում . . .
Եւ այն ինչ զօհերի գոլորշիացած ոգի-

ները մթնոլորդային օդի ճնշողականութեանը հետ մաքառելով բարձրանում էին երկնքի եթերքը, դէպի անաչառ Դատաւորը, նոցա եփած և հում նշանաւոր անգամներից մեծ մեծ աշխարհի ողորման հիշերային մթութեան մէջ անհետանում էին իրանց նախնի սովորութեան համաձայն դէպի եկեղեցու պայծառութեան և օգտին մի քանի տարի թուիցս առաջ մինչև գուցէ իւր կենաց վերջն անձնագոհութիւն ուխտած N. ին և նրան համախոհների ու արբանեակների խոհանոցներին ի վերջոյ և անշուք կամ փարթամ սեղաններին ողջունելու ու իրանց պարաքը կատարելու: Եւ այս մեղք չէ :

Յարութեան կիրակի առաւօտեան, անհամար մոմերով լուսաւորուած և մի բթաչափ հաստութեամբ փոշիա պատ եկեղեցու մէջ խուռն բազմութեան և կարծես միայն շռայլութեան համար ստեղծուած պճնասէր և դէպի անդունդը տա-

նող նորասիրութեան (մօտայի) ջերմ երկրրպագու տիկնայց և տիկնանման օրրոգաց առաջ Հայ հոգևորականութիւնը, ցաւօք սրտի ասած, աններդաշնակաբար կատարում էր սլատարագի սրբազան խորհուրդը. իսկ դրսում կին՝ թէ մարդ, աղջիկ՝ թէ տղայ, մեծ՝ թէ փոքր իրար էին խառնուել, անգօրը միշտ յետ էր մնում. բոլորն էլ ուզում էին Թիւրք ստանալ, մատաղի ջուր տանել, թէ և ջրի երեսն էլ երկու անգամ քաշուած :

— Բիլէթ տո՛ւր, կոչեց կառավարիչը:

— Համեցէք:

— Ո՛ւ՛մ տղան ես: Կոյմանս գրգռո՛ւ:

— Մին:

— Մի քանի լաւ գլխիքայ և 3-րդ դազանի մատաղի ջրիցը տուէք տանի:

— Ես աղքատ եմ, մատաղի փող չեմ տուած և բլէթ չունիմ:

— Սպասի՛ր . . . :

Մի երրորդը՝ ի սէր Աստուծոյ երեսաս հիւանդ է, տանս էլ ոչ ոք չկայ մի

փոքր մատաղի ջրից տուէք, հիւանդս է
ուզում:

— Գնձ, գնձ, գեռ ժամանակ չէ,
սպասիր:

Մի ուրիշը, — ահա բիւլթս:

— Տուէք միայն երկու թիւ:

Մի խօսքով նրանք դիտէին ով ինչ
պիտի տանէ: Դժբաղդաբար ես ևս բի-
լթ չունէի և չէի էլ ուզում «սպասել»
բառը արհամարհական եղանակաւ լսելու.
ալլ քաշուած մի կողմ հետաքրքրաբար
նայում էի իմ շուրջը կատարուող զրզու-
եցուցիչ գործերի և զոհի սրբազան խոր-
հուրդը ոտնակոխ անող անխիղճ և մար-
դահաճոյ անձնաւորութեանց վրայ:

Եկեղեցին արձակուել էր, բացի եր-
կու քահանայից, երիցփոխից, մատաղ հա-
ւաքող կամ նրանց օգնականներից և շար-
քով կանգնած մի քանի աղքատներից ոչ
ոք չկար:

— Հը, հինչ կայ ջեարկըք ընկալ,
հարցրեց կոպիտ եղանակաւ աշխարհա-

կաններէց նշանաւորը:

— Մեք աղքատներ ենք մատաղ ենք
ուզում:

— Աղքատը հինչ կանի մատաղը, քե-
ցէք, քեցէք, ողորմութիւն հաւաքեցէք:

— Մեք այդ տեսակ աղքատներից
չենք:

— Տէր հորք, Դուք ճանաչում էք
սրանց, հարցրեց մէկը:

— Ճանաչում եմ միայն այս երկու-
սին, որովհետեւ իմ թաղի մէջ են բընակ-
վում պատասխանեց քահանայից մէկը:
Քանիսներին էլ ես եմ ճանաչում, աւելա-
ցըրաւ միւսը:

— Մի թէ մեզ չէք ճանաչում, հար-
ցրին երկու կանայք N. ք—ից:

— Ճանաչում եմ, բայց Դուք աղքատ
չէք:

— Մեք ի հարկէ հրապարակական
աղքատ չենք, բայց եթէ հարուստ լինե-
ինք, քեզ համար օրն եօթն կոպէկով
չէինք բանիլ շաբթի մի օրն էլ ձրի և

գուցէ այսօր աղքատների աղքատը կա-
սէիր մեզ, եթէ քոյ... չմերժէինք:

Վերջին խօսքերը շարժեցին ողոր-
մելիների աչքերի մէջ բարկութեան ար-
ցունք, և առանց ոչինչ ստանալու հե-
ռացան դէպի իրանց տները: Ես քաշու-
ած մի կողմ զարհուրանքով ընկղմուած
իմ տխուր յիշատակաց ծովի ալիքների
մէջ, վայրակ լռութեամբ արտասուելի
աչքերով, այս էի ասում դէպի իմ մա-
սամբ բաղդակից կանայք: Արցունքը մի
Աստուածային պարզե է, երկնային ցօղ է,
որով մեր աղտեղութիւնները և շատ ան-
գամ վերքերը կ'լուանանք. բայց Ձերը
թէ և բարկութեան, այնու ամենայնիւ
արցունք է: — 7 գլխավոր յոյժ միջ

Եկեղեցական սպաստհարկուք մի քա-
նի մարդկանցով գտնվում էին եկեղեցու
սենեկում, մի ժամահարի հետ երեք մը-
շակներ կանգնած էին գաւթում. իսկ ես
իմ տեղն անշարժ: Քահանաներից մէկը
ներս մտաւ խիստ խօսքերով—անսլիտան-

ներ, այսքան Բիշառն ում համար էք պա-
հում, ինչու աղքատներին դռնից զա-
գարկ էք չեա դարձնում, ինչու մեր աղ-
քատ ժողովրդականք, որոնք իրանց աղ-
քատութեան համար մատաղի փող չըտա-
լով բիլէթ չեն ստացել, այսօր առանց
մսի են մնում, միթէ միայն փող տվողը
պիտէ ստանայ...: Ինչու մէկը տասն մար-
դի բաժին կ'տանէ. իսկ տասը կմնայ ա-
ռանց բաժնի: Ինչու ժողովրդի ջերմե-
ռանգ զոհաբերութիւնն արգարութեամբ
չ'բաշխուել...: Ինչ մարգահաճօղութիւն
և սրբապղծութիւն է: Աստուծոյ՝ այդ տե-
սակ մատաղը, չէ ընդունելի. այլ միայն
Ձեզ նման անպէտք մարդկանց՝ որ մինչև
կրկնագատիկ դրանով ապրէք:

Այս ասելով գուրս եկաւ և նկատե-
լով ինձ, իսկոյն կանչեց—Աշոտ, Աշոտ:
Մօտացի դէպի նա, — Տէր հայր, Դուք բա-
ւականին զայրացած էք և սաստիկ քրթ-
նած, այդպէս լաւ չէ, կ'հիւանդանաք,
շատ լաւ կանէիք որ տուն գնայիք, նկա,

1006
29261

տեցի ես:

— Ո՛չ՝ սիրելի, այսօր չէ կարելի հանգրտանալ, ես հէնց միշտ հիւանդ եմ և հիւանդ կմնամ, քանի որ գտնվում եմ բարոյապէս հիւանդների մէջ:— Այս օտարականին մասը տուէք, կոչեց Տէր Հայրը դէպի ակօւիքները թափուած մի շէկ ցից ցից բեխերով կարմրերես մարդ և հեռացաւ ինձ վերջին խօսքերն ասելուց լետոյ— Երեկոյեան ժամը 7-ին Ձեզ մեր տանը կ'սպասեմ:,,



Բ.

Որպէս զի ընթերցողը լաւ իմանայ թէ ես սրտեղից էի Տէր Հօրը ճանաչում, թո՛ղ ներողամիտ լինի ինձ նա, որ այս տեղ մի փոքր ճանձրոյթ պիտի լինիմ: Ռուս—Տաճկական վերջին սլատերազմի ժամանակ Բայազետ անգուլթ Տաճիկներին և բաշիբիզուկների ձեռօք կրակի, սրի ճարակ լինելուց և ծնողացս եղբորցրս մահն աչօք տեսնելուց լետոյ, հազիւ երեք ընկերներով կարողացայ մի կերպ հասնել Պարսից հողը: Քանի տարի թափառելուց և մօտ երեք ամիս Դաւրէթ բնակուելուց լետոյ, ճանապարհ ընկայ Պարոն Ա. Վարդանեանցի օգնութեամբ դէպի Բագու, ինձ համար արուստ գտնելու:

1880 թիւ կարծեմ Մայիսի ամսում, Աստարից մտնելով Մերկուրի ընկերութեան շոգենաւներից մէկը, հէնց այն տեղ

ընդունելութիւն գտայ մի երիտասարդից, որն իմ ճանապարհի ծախքն անգամ հոգալով մինչև Բագու, ամենայն կերպ աշխատեց և ինձ համար գործ գրտնելու: Եօթը տարի Ռուսաստանի զանազան քաղաքներում ծառայելով և լսելով որ իմ քրոջ որդին Բայազէտի կոտորումից յետոյ գտնվում է Դեարալակեագի Միլիշկեայ գիւղում, ճանապարհուեցայ դէպի նա, և ճանապարհին կորցրած առողջութիւնս մասամբ գտնելու համար, մնացի N. քաղաքում, որտեղ և ճանաչեցի քահանայական սրբազան կոչման մէջ այն երիտասարդին, որը մի ժամանակ օգնութեան ձեռք էր մեկնել իւր դժբաղդ եղբօրը:

Երեկոյեան գտնվում էի Տէր Հօր մօտ. նա բաւականին տխուր էր, տխուր էր և նրան անշուք, համեստ բնակարանը, նա բաւականին փոխուած էր և կարծես մի և նոյն ուրախ երիտասարդը չ'լինէր, որ քանի տարի առաջ տեսել

էի. նրան միրուքի մէջ և գլխում տեղ տեղ փայլում էին արծաթաթել մազեր: Գրասեղանի վրայ ընկած էր մի քանի նամակներ և հաշուեթղթեր: Թագաւորող լուութիւնը ընդհատում էր երբեմն երբեմն համրիչի չխչխկոցը:

— Այժմ ազատ ենք, կէս ժամից յետոյ ասաց Տէր Հայրը:

Ինչպէս երևում է դեռ Գուք չէք վերջացրել Ձեր հաշիւը N. հետ:

— Ինչպէս վերջացնեմ Աշոտ, հազիւ կարողանում եմ մի կերպ ապրել:

Տարեկան սրբան եկամուտ կ'ստանաք, հարցրի ես:

— Շատ քիչ,

Քանի տուն ծխական ժողովուրդ ունիք:

— Ծխերը մեզանում չէ բաժանուած, մեր միաբանութիւնը կատարում է անխտիր ժողովրդականաց ծխակատարութիւնները:

Իսկ տուն օրհնէքի ժամանակ:

— Նշանակուած է իւրաքանչիւրի սահմանը:

Գոյացած եկամուտը:

— Բերում ենք մէջ տեղ:

Սրբութեամբ:

— Պարզն սասած, կասկածելի:

Զեզանից իւրաքանչիւրը քանի տուն կունենայ օրհնելի և որքան եկամուտ կստանայ դորանցից:

— Իմն՝ որ ընկերներէցս մասամբ՝ քիչ է, ահա՛ այսօրուայ 70 տանից ստացածիս ճիշտ գումարը 13 ը. 50 կ. իսկ մընացեալներէց ուրախ եմ 10 ը. ստանալու:

Ուրեմն այս Զատիկիս իւրաքանչիւրը Զեզանից որքան կստանայ:

— Հանգիստ ու տնօրհնէք և եկեղեցական եկամուտ ընդ ամէնն՝ 35—40 ըուբլի. *

* Իսկապէս մի կողմը գնելով մի քանի քաղաքների հողերը և որակեաց վիճակը, մնացեալները թէ և շատ անախտ և ցաւովի բայց վրտակ մտնելու և խմանալու քահանաների խղճովի գրութիւնը, ի զուր նրանց թիւր կաւելացնեն:

Գուք ամենայն տարի մի և նոյն թաղն էք օրհնում:

— Թէ և մի քանիսների կամքին հակառակ, այնու ամենայնիւ քան ծրիաբաժանութիւնը շատ լաւ կ'լինէր որ մեր եկեղեցու միաբանութիւնն եկող տարուանից ամենայն տարի փոփոխութիւն անէր, այնպէս որ առաջինը՝ քահանաները կ'կարողանայինք մեր բոլոր ժողովրդականաց հետ ծանօթանալ, երկրորդ՝ մի քանի անխիղճ և ամօթալի արարմունքն էր առաջն առնել: 1* Ահա՛ քանի տարի է որ ձեռնադրուել եմ, միայն ճանաչում եմ այն ժողովրդականաց, որոց նախ քան ձեռնադրուելիս նրանց յայտնի լինելու մասին

1 * Մեր մէջ կան քահանաներ որ 20—25 տարի կ'լինի իրանց ձեռնադրուած օրից ինչ թաղ որ իւր եկեղեցու մեծ քահանան նշանակել է իրանց, մինչև օրս նոյն թաղն են օրհնում, որը պատճառ է լինում ժողովրդականաց շատ մասը չճանաչելուն և նրանցից խորթանալուն: Մինչև անգամ կան և այնպիսիներ, որ ամաչում են առանց պատճառի իրանց ծխական անծանօթ ժողովրդականաց դռնով մտնելու:

կ'ճանաչէի և նրանց՝ որոց տները տարին երկու կամ երեք անգամ բաղդ եմ ունենում մտնելու. բայց քահանային հարկաւոր է բոլորին ճանաչել, բոլորին ծանօթանալ, մտնել հայրաբար նրանց կեանքի մէջ, իմանալ նրանց կառավարչութեան լաւ թէ վատ կողմերն օգնելու՝ և օգտուելու համար, և իւր սրբբազան կոչմանը համաձայն մխիթարել, քաջալերել բեկեալներին, լքեալներին, բուժել բարոյապէս վիրաւորուածներին, արմատախիլ անել ժողովրդականաց սրբտերում հետ զհետէ աճող ազգակործան որոմներն և յորդորել նրանց դէպի այն ուղին, դէպի այն ճանապարհն, որը տանում է դէպի այն բարոյական Վարդապետը—դէպի այն մարդկութեան Փրկկիչն, որին ուխտած է հետևող լինելու:

.

Ներեցէք Տէր Հայր, որ ես այս առար-

կան փոխելով մի ուրիշ հարց անելու կ'վստահիմ: Իմ պտտած Ռուսաստանի հայաբնակ քաղաքներում այս տեսակ զատկական մատաղ չեմ տեսած, սա որ տեղից է մտած Ձեր մէջ և ինչ օգուտ ունի:

— Աշոտ, Գուք մի այնպիսի հարց կանէք որ իսկութիւնը պարզել շատ դժուար է, մանաւանդ ինձ համար. բայց քանի որ Ձեզ ճանաչում եմ ինչպէս մի ազնիւ և բարեմիտ երիտասարդի իմ կարացածիս չափ պիտի պարզեմ Ձեզ. միայն ներողամիտ պիտի լինէք, որ հեռուից կրկեսեմ և խօսքս կ'երկարի: Մարդիկ դեռ մեր սրբազան կրօնքի զարմանալիքը չըմբռնած, Աստուած ահագին ու սարսափելի էր իրանց, նրան բարկութիւնն իջացնելու և նրան իրանց հետ հաշտեցնելու անմիջական միջոցը գոհն էր: Բնութեան մէջ գտնըվող նիւթերին Աստուծոյ պատիւ տալով իբրև Աստուած կ'պաշտէին, թէպէտ ըստեղծողի և ստեղծուածների զանազանու-

թիւնն էլ աչօք կ'տեսնէին:

Մարդկային հոգին, միտքն՝ առանց մի երկնային ուժի զօրութեան, չէր կարող ճանաչել իւր Արարչին, և հէնց այդ մարդասէր Զօրութիւնն—Աստուած իւր շնորհքը տալով մարդկութեանը, ճանաչացրաւ զինքը նրան. բայց նրան էլ միայն հօր Աստուած կասէին, և ոչ թէ սիրոյ: Մարդկութիւնը կապող կուռ շղթիան խզուեցաւ, երբ որ հրեշտակները երկնքում փառք և խաղաղութիւն կ'ընդգէին: Մտրի պայծառ և խորհրդաւոր աստղը կ'փայլէր աշխարհի չորս կողմը իւր լոյսը սփռելով: Դժբաղդ ու թըշուառ մարդկութիւնը շատ բան սովորեց:

Հինը նորոգող, խաւարը լուսաւորող երկնառաք Որդին հազարաւոր բարոյական վարդապետութիւններ սովորացնելով մարդկութեանը, զինքը նրան օգտին, նրան փրկութեանը կամաւոր զոհեց: Հեթանոսական հուրը, սուրը, սնոտիապաշտութիւնները, զանազան բռնութիւնները

րի հետ ոչնչացան: Ո՛հ երանի թէ նրան զօրութիւնն իսպառ անհետանար աշխարհից: Մեր հաւատքը լուսի պէս առաջացաւ, թռաւ գնաց, արեգական, լուսնի, և զանազան անշունչ արարածների, Յունաց բազմաստուածութեան երկըրպագութեան վրայ ստուեր ձգեց և հեթանոսութիւնն Ոլիմպիական բարձրութիւնից անդունդը դահավիժեց:

Սիրելի Աշտ, բնութիւնը միշտ նոյնն է, անցած գնացած բաները նա չէ մեզ սովորացնողը. բայց կայ սովորացնող, այդ մեր նախահարց սուրբ արիւնով շաղախուած եկեղեցին է, որի ուղիղ շաւիղները պիտի ցոյց տան մեզ նրան սրբազան ծառաները: Բայց ո՞ւր են այդ ծառաները և ովքեր... այդ մի հարցնել: Անցեալը ներկային հետ համեմատելով, մարդու սիրտը լցնվում է արիւնով:

Իմացօր Աշտ, ինչո՞ւ համար եկեղեցիներ շինուեցան և ինչ դեր պիտի կատարէ նրան ծառան: Այդ սրբազան

տան մէջ բարեբալդն իւր փրկութեան համար այդ տան ծառայի բարեմալութու-
թեամբ և օգնականութեամբ շնորհակալ կ'լինի Աստուածանից, դժբալդը մըխի-
թարութիւն կ'իսնգրէ, մեղաւորը, յան-
ցաւորըն իւր յանցանքների համար թո-
ղութիւն կ'գտնէ: Այս կեանքի դիւրաբէկ և
ալեկոծ նաւը շուտ կ'կործանուի կան-
հետանայ, աշխարհքի փառքը մեր կեան-
քի հետ խոր վհի մէջ կ'ընկնի, թագ,
պոսկ, աղքատի մաշած մախաղը, հա-
րուստի ոսկին, արծաթը, պանդխտու-
թեան, գաղթականութեան ազգակործան
և հայրենիք իսպառ մոռացութեան տը-
վաղ ցուպը մի կողմ ձգելով կ'փակէ աչ-
քերը, կ'զնայ այն անդառնալի ճանա-
պարհը, որով թէ գարնան ծաղկափթիթ
հասակի մէջ պատանին, թէ կատարեալ
այլը և թէ արծաթաթել ձերուսիք գընա-
ցած են, զնում են և պիտի զնան: Բայց
թէ սորանցից իւրաքանչիւրն ինչպիսի՞
տարբերութեամբ: Բեր Աշոտ, բեր սորանք

միտդ ու բարեբալդութեանդ և դժբալդ-
ութեանդ ժամանակ չ'մոռանաս մըտնե-
լու եկեղեցի, մեծարելու նրան արժանա-
ւոր պաշտօնեաներին և յարգելու նրան
սրբազան օրէնքները ու կանոնները: ո-
րոնք քեզ միշտ պահպանելով կըմխիթա-
րեն:

Մի փոքր առաջ ասացի, որ մարդիկ
իրանց գործած յանցանաց համար Աս-
տուծոյ բարկութիւնն իջացնելու ու նը-
րան իրանց հետ հաշտեցնելու միակ մի-
ջոցը ընտրած էին զոհն, որն առաջացել
էր կրօնի սաստիկ զգացումից և այդպէս
էլ աւանդաբար մնացած է մեր մէջ: Բայց
թէ այս տեսակ անբան զոհերի համար
մինչև օրս կամ այսուհետև անգիտակ-
ցաբար եղած կամ լինելի դրամական կո-
րուստըն ո՞րքան անթիւ բանական անմեղ
զոհեր է կորցրած և պիտի կորցնէ, ո՞վ
կարող է սահմանել:

Ո՛հ ո՞րքան երջանիկ և բազդաւոր
կ'լինէր այն ազգն, որ աշխատէր անա-

սունների զոհագնաւ իւր ազգի աղքատ, անտէր, թշուառ, զժբաղդութեան և անբարոյականութեան զոհուող անդամներին ազատելու, նրանց կեանք տալու. նրանց մարդկութեանը վայել աստիճանի վրայ դնելու, նրանց դէպի բարոյականութիւն դէպի առաքինութիւն մղելու, որոնք անշուշտ նոյն ուղղութեանը հետևելով երախտագիտական զգացմունքով վառուած, ազգի վարկը պիտի բարձրացնէին և իբրև նրան հաւատարիմ և պիտանի զաւակներ՝ անմահ լիշատակաց արժանի լինէին:

Ընդհանուրը մի կողմը ձգելով, զանք մասնաւորին: Մեր այս գաւառական քաղաքն ահա քանի տասնեակ տարիներ են որ իւրաքանչիւր տարի հէնց նոյն Զատկի օրը 1500—2000 բուբլի փող է կորցրնում * գոնէ եթէ իւրաքանչիւր տարի

*Մի կողմն եւ թողում համարն ա իւրաքանչիւր շաբաթ Ս—Ք—Ի և սրան նման ուխտատեղիների տակ հարեւրներով լինող աննպատակ ծախքերը:

այդ համեստ գումարի մի քառորդը մատաղի գործ դնելով և մնացեալ երեք մասն ապահով շահեցողութեան տուած կամ անշարժ օգտաբեր կալուածներ առած լինէր, ազգութիւնն անխախտելի եղանակաւ սլահպանող երկու գլխաւոր սըրբազան սիւնների—եկեղեցու և նրան զաւակներին կրթող ուսումնարանի անուամբ, այսօր իւրաքանչիւրը կունենար մի նշանաւոր հարստութիւն, որի տոկոսիքով կամ եկամտով այս փոքրիկ քաղաքում թնջ չէր կարելի անել:

Աշոտ, Ձեր այստեղ դալուց չետոյ, օր չէ անցել որ ես թէ փողոցներում, թէ եկեղեցիների դրան, թէ ճանապարհներում Ձեզ ցոյց տուած չլինեմ 10-ից 12 տարեկան աղջիկներ, տղաներ, ըսել թէ մէջ կանալք, որոնք անտէր անտէրունչ իրանց օրականը ձեռք բերելու համար պտտում են մի թաղից միւսն և ինչէր չեն լսում կամ տեսնում բաղդի այդ խօբթ որդիները, դորանցից քանի՞

քանիսները շնորհիւ իրանց պէս մեծացած և ի վերջոյ անբարեմտացածների, ընկած են անբարոյականութեան գիրկը. և իբրև մարդկային կենդանի գոհեր, աշխատում են իրանց թիւը շատացնել ու իրանց ապականուած արիւնով, վարք ու բարքով փչացնել և ուրիշներին: Իսկ թէ մի այսպիսի դէպի անդունդը դէպի կորուստը տանող ընթացքի առաջն ո՞վ պիտի առնէ, եթէ ոչ՝ ազգի ազատամիտ ու նրան բարօրութեանը նախանձանդիր զարգացած դասն ՚ի հարկէ հոգևորականութեանը հետ:

Ախ, մեղանչեցի, ինչ եմ ասում, մի թէ հայ հոգևորականն այդ սխալ և իւր նիւթականին վնասող քայլը կանէ, չէ, նա կուզէ որ շատ հոգիներ զոհուին անբարոյականութեան, տգիտութեան, քան ինքը զրկուի տարեկան մատակց գոյացած մի աննշան եկամտից: Դուք միթէ չնկատեցիք Աշոտ, Ն. Ն. յանդիմանութիւնը Ն-ին թէ ինչո՞ւ

ոչխարները խուզածն է առել և ինչո՞ւ իրանց բաժինը սովորականից քիչ է եղած ևն ևն:

Անշուշտ կ'լինին հոգևորականութեան մէջ մասնաւոր անձինք, որոնք բացառութիւն կ'կազմեն ընդհանրից. բայց միթէ կ'վստահանայ այնպիսին այն էլ մերի պէս մի լետ ընկած գաւառական քաղաքում այս տեսակ մի նոր միտք յայտնելու ժողովրդականաց, առաջին քարը հէնց հոգևորականներից կ'ձգեն ողորմելու գլխին, առաջինը նրանք կրլինին որ իրանց անձնական օգուտը պահելու համար, միամիտ ժողովրդի մէջ կ'տարածեն թէ Ն. քահանան, հոգևորականը հակակրօնական գաղափար է քարոզում: Եւ թէնչ էք կարծում, միթէ նա ողորմելին չ'զոհուի՞լ ժողովրդի և իւր պաշտօնակիցների տգիտութեան կամ խարդաւանքներին, այնուհետև այն թշուառը ինչո՞վ ապրի, ո՞ւր գնայ, թէնչպէս արդարացնէ զինքն ու հաւատացնէ ժողո-

վրդականաց թէ՛ Աստուծոյ աւելի հաճելի
և ընդունելի կ'լինէր եթէ նրանք գոնէ
իրանց զոհերի կէս փողով աշխատէին
իրանց թշուառ, անտէր, ողորմելի, աղքատ
և որբ եղբայրներին օգնելու: Ուրեմն
նրան հոգևորականին՝ պիտի աջակցէ,
ընկերանայ, միանայ ժողովրդի զարգացած
դասը, նա պիտի բարձի թողի անէ այն
բոլորն, ինչ որ օգուտ է իւր ազգի առա-
ջադիմութեանը նրան մտաւոր և բարո-
յական զարգացմանը:

Իւրաքանչիւր մի ազգ մի քաղաքա-
կան ընկերութիւն է, և ազգի կեանքը
նրան տեղեկանութիւնն է, եթէ կ'քակ-
տուի այդ ընկերութիւնը, կ'մահանայ ազ-
գը թէ և նրան անդամներն էլ կենդանի:
Եթէ ազգին ոչինչ չէ պակասում դէպի
այդ միութիւնը— ընկերութիւնը հաս-
նելու, նա կատարեալ է և նրան այդ
կատարելութեան աստիճանից է կախու-
ած նրան արտաքին վիճակի առաւել կամ
նուազ բարօրութիւնը: Ազգը ինչպէս իւր

գոյութիւնը, նոյնպէս և իւր անդամնե-
րինը պիտի պահպանէ, պիտի խնամքով
հսկէ նրանց վրայ, պիտի նրանց ամեն
վնասակար և մահացուցիչ հետեանքե-
րից հեռացնէ, որովհետև անդամների կո-
րուստը զինքը կ'տկարացնէ, որն և կ'վը-
նասէ իւր գոյութեանն. և մենք այս
բոլորը մի կողմն ենք ձգում գիտակցա-
բար:

— Արժէ միթէ այս տեսակ երազա-
կան կամ երևակայական բաների, առար-
կաների վրայ մտածել, ուշ դարձնել, այն
էլ այս յիմարների մէջ— ասում է մեր
ինտելեգենցեան և մասամբ էլ ժողովրդա-
կանաց մէջ համարմունք ունեցող վաճա-
ռականաց դասն առանց մտածելու որ,
առողջներին բժիշկ չէ հարկաւոր և սը-
րանցից որը Շիլլերի, որը Գեօթէի կամ
Շիքսբերի և որը Հիւգոյի կամ Պուշկինի
հեղինակութիւններով սիրահարուած, և
ո՛չ նրանց հետևող, քաջվում իւր առանձ-
նասնեակը, մի քանիսն էլ բռնում են

սպիտակ փոշիով ծածկուած կանաչ սեղանի շուրջը: Այն, այս տեսակ ձեռնտու և հանրագուտ գործերի մասին իհարկէ արժէ մտածելը, գիշերը՝ ցերեկ, ցերեկը՝ գիշեր դարձնելը, ժամանակը, առողջութիւնը իւր թշուառ ընտանիքի ապրուստի հետ զոհելը:

Իսկ միւս մասը չէ թէ ծանրաբեռնուած է զանազան գործերով, միթէ արժէ բարոյական հարստութեան—այդ փոր չ'կշտացնող, անուն չ'բարձրացնող, ջիւճ չ'լքցնող, անպէտք, անգոյն բանի համար, զոհել նիւթական հարստութիւնն, որով ամենայն ինչ կարող է մարդ իւր զուարճութեան համար ձեռք բերել և զինքը ամեն բանի՝ և ամենը իւր մէջ համարել: Միթէ մթութեան, տգիտութեան խաւարի մէջ միայն իրանց օգուտն որոնողներին հաճելի կ'լինի լոյսը...: Միթէ հէնց ընդհանրի մեծամասնութեան այդ տգիտութիւնը չէ՞ նրանց հարստութեան գլխաւոր պատճառը...: Պղտոր

ջուրը ձուկ որսողին թնջ վնաս: Եթէ Հայ հոգեւորականութիւնն, որ իւր ազգի մի ամենաաննշան մասն է կազմում, ունի իւր մէջ ընդհանրից բացառութիւն կազմող հասարակաց օգտին մտածողներ, որքան առաւել նրան հասարակ դասը պիտի ունենայ պէտքական մարդիկ, ուրեմն ինչո՞ւ յուսահատուիլ, ինչո՞ւ թուլանալ, ինչո՞ւ երկուսն էլ ձեռք ձեռքի տուած չօգնեն ազգին և հետեւապէս իրանց: Երկու երեք անգամ քուէները ձգելու և անաջող գալուն համար հարկաւոր չէ կոտորուիլ, սկսածը կիսատ թողիլ. այլ պիտի զգուշութեամբ, խոհեմութեամբ և առանց կրքերի քարերը տեղափոխել: Եթէ ամենահեշտ անգամ գործերին անկարծելի արգելքներ են պատահում, այնպէս էլ ամենադժուարներն առանց ճարի, առանց դարմանի չեն մընում:

Եթէ այս, ամենիմաստ ընութիւնից մարդկութեանը շնորհած մի անհերքելի,

արդար և սրբազան օրէնք է որ, մարգիկ
դէպի իրանց նմաններն, ազգերը դէպի
միւս ազգերն առանց կրօնի խտրութեան
սարտական են սիրել միմեանց, միմեանց
բարօրութեան, կատարելութեան, երջան-
կութեան համար մտածել և հարկաւոր
դէպքում օգնութեան ձեռք մեկնել
իհարկէ առանց իրանց բարօրութիւնն և
խաղաղութիւնն խալաւ կորցնելու, ու-
րեմն որքան առաւել այն ազգը կամ ան-
հատը սարտական է այն ազգին՝ կամ
անձնաւորութեանն, որի հետ բացի բընա-
կան օրինաց, կապուած է թէ կրօնական
սրբազան և թէ քաղաքացիութեան կա-
պերով: Եւ միթէ հէնց այն չէր սովորացը-
նում Փրկիչն—ինչ որ ցանկանում էք Ձեր
անձին, նոյնը սարտական էք ցանկանալ
Ձեր ընկերին, Ձեր եղբօրը:

Եւ այս իսկ է բնութեան լաւիտե-
նական և անփոփոխ օրէնքը:



✓

6403

ԳՐԻՒ

գինն է ամեն տեղ 20. Կ.

10 հատից աւելի առնող-

ներին՝ 15 Կ.

Վաճառվում է Շուշի Խորէն
ք. Խակեանդարեանցի մօտ:

Մահտեսի-Յակովբեանցի տպարա-
նում ընդունվում են ամեն տեսակ
պատուէրներ հայերէն, ռուսերէն և
թուրքերէն լեզուներով, որոնք կատար-
վում են ձեռնառու գներով և լաւ կերպով:

2013

2013

